ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 14. **1844** ՅՈՒԼԻՍԻ 15.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լոմբրաչոուկին[1] Էլեքտրական գործարանը։

Կենդանեաց փնասողական և պաշտպանական զէնքերուն մէջ ամենէն զարմանալին էլեքտրական ձկներուն է։ Իրաւ որ շատ զարմանալի է նաև փղին պատիճը որ թէ ձեռքի և թէ քթի տեղ կը բանեցընէ, գետնառիւծին երկայնլեզուն՝ որովմրջիւնները կ'որսայ ու կ'ուտէ, քանի մը ձկանց երկայն թելերը՝ որ ծովուն երեսը տարածելով պզտիկ ձկները կը քաշեն, օձը որ կաթիլ մը թունով մեծամեծ կենդանիներ կը սպաննէ, և մէկ նայուածքով թռչնոց վրայ անանկ վախ մը կը ձգէ որ ապաւինելու տեղ մը գտնելուզելով կ'երթան անոր բերանը կ'իյնան. թէպէտ ասոնք ալ զարմանալի են, բայց վերջի երկուքէն զատ առջինները պարզ մեքենական կամ բնական զօրութենէ մը առաջ գալուն՝ զմարդ շատ չեն ապշեցներ։ Իսկ էլեքտրական ձկներուն զօրութիւնը բոլորովին անոնցմէ տարբեր է, և կարծես թէ մէյմէկ բնաբանական գործիքներ են. իրենց խածուածքը կամ տուած փնասը աննիւթ ու աներևոյթ զէնքէ մը առաջ կուգայ, որ է էլեքտրական հեղանիւթը։ Այս ձկները իրենց թշնամւոյն դպչելուն պէս՝ կարծես թէ կայծակնահար կ'ընեն զանիկայ։ Այս պատահի երբեմն որ մարդիկ լողալու ատենին սաստիկ յաղուածներու ցնցում կը զգան. ասբանս առաջ կուգայ ան ձկներուն դպչելէն կամ սաստիկ մօտենալէն։ Ինգամ մը Հումպոլթ անունով երևելի աշխարհագիրը ջրէն նոր դուրս հանած էլեքտրական ձկան մը վրայ կոխելով մեծ էլեքտրական գործիքէ զարնուածի պէս ցնցում ունեցաւ, և երկար ատեն յոգացաւութիւն քաշեց։ Զուկը որ կողմէն ուզէ՝ կրնայ հանել աս զօրութիւնը. թմբրաձուկը երբոր մէկուն զարնէ՝ կուրծքին թևերը սաստիկ կը շարժէ. իսկ ծիծառն ըսուած ձուկը անշարժ կը կենայ։

Ինապատուհները շատ տեսակ բաներ գրեցին ու խօսեցան աս ձկներուն էլեքտրական գործարանին վրայ. ասոնց մէջ երևելի եղաւ Լոպէր տը Լամպալ անունով գաղղիացին, և իրեն ըրած ստորագրութիւնը շատ համեմատ է բնաբանական փորձերու։

[1] Գղ. Torpille. Իտ. Torpedine.

Ինքը կ'ըսէ թէ աս զօրութեան գործարանը ձկանց թոքէն դուրս տեղաւորուած՝ բակլայի ձեւով երկու պարկեր են . ասոնց մէջ խժային հիւթէ հատուածակողմեր կան՝ ջղային թելերով պատած . բայց աս թելերը չեն խրիր խժային հատուածակողմերուն մէջ ։ Ամենեւին արեան երակներ չեն տեսնուիր . և անանկ բան մը չկայ որ կալվանեան փիլային հետ նմանութիւն մը ունենայ ։ Կ'երեւնայ թէ աս հատուածակողմերուն ու թելերուն վրայ կըքալեն, կ'ըսէ, ելեքտրական յորձանքները ։

Թէպէտ և գործարանը ճիշդ ալ գիտնայինք՝ կը մնար գիտնալ թէ արդեօք թմբրաձուկը ինչպէս կը բանեցընէ աս զօրութիւնը . արդեօք միշտ ունի, թէ հարկաւոր ժամանակ կը գոյանայ . ինչպէս կ'ըլլայ որ կենդանին ուզած կողմէն աս զօրութիւնը արձըկէ . նոյն ատենը ինչ փոփոխութիւններ կ'ըլլայ գործարանին վրայ . ո՞ր մասին վրայ է աւելի ուժը ։ Ասոնք ամէնքն ալ հիմակուհիմա մէյմէկ գաղտնիք են . բայց յուսանք որ իմաստնոց ջանքովը կամաց կամաց բացատրութիւն մը գըտնուի ասոնց ։

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գայլ ։

ԳԱՅԼՈՒՆ երկայնութիւնը սովորաբար երկու իրեք ոտնաչափ ու կէս կ'ըլլայ, գոյնը սեւ ու մոխրագոյն . բայց քանի որ տարիքը առնէ՝ կը ճերմըկի ։ Կանատայի գայլերը բոլորովին սեւ կ'ըլլան, տեղ տեղ ալ բոլորովին ճերմակ ։ Գլուխը երկայնաձեւ է, վիզը խիստ կարճ, դունչը երկայն, հոտառութիւնը սուր, ակռաները խոշոր, ականջները նեղ ու սուր . աչուըները քիչ մը կանաչ ու կրակոտ, և ծայրերնին դէպ 'ի վեր ծռած, և բոլոր կերպարանքը կատաղի . մորթը թանձր ու հաստ ըլլալուն՝ խոշոր կ'երեւնայ . անոր համեմատ ալ պոչ ունի՝ հաստ ու երկայն ։

Գայլ շատ եղած տեղուանքը շատը մէկտեղ՝ կամ խումբ խումբ կ'իջնան լեռներէն, սոսկալի վնասներ կ'ընեն . գեղերը կը կոխեն, գառներ, ոչխարներ, խոզեր, հորթեր, և ինչուան շներ ալ կը յափշտակեն կը տանին ։ Ու թէպէտ ո՛ր և իցէ միս կը սիրէ, բայց մէյմը որ մարդու մսին համը առած ըլլայ, անդադար մարդ կը փընտռէ . անանկ որ աւելի հովիւը կ'ուզէ յափշտակել, քան թէ ոչխարները ։ Երբոր բոյնէն կ'ելլէ որ որսի երթայ, առաջ կը կենայ դէպ 'ի չորս դին աղէկ մը կը հոտուըտայ . և քամին ո՛ր կողմէն որ փչէ՝ դէպ 'ի ան դին կը սկսի երթալ, որ կենդանւոյ մը հոտ կայ նէ՝ աւելի դիւրաւ ու հեռուանց առնէ ։ Ոչխարներու բազմութիւն որ տեսնէ՝ կամացուկ մը կը մօտենայ, ու յանկարծ վրանին յարձըկելով՝ երբեմն մէկ հատը միայն կ'առնէ կը փախչի, երբեմն մէկ կտորը միայն կը խածնէ կը տանի, երբեմն ալ փարախին մէջ որչափ ոչխար որ գտնէ՝ կը խղդէ, ու ետքը մէկիկ մէկիկ կը սկսի բոյնը կրել ։

Շատ անգամ գայլերը իրենցմէ մեծ կենդանիներու վրայ ալ կը յարձըկին . և երբոր իրենցմէ մէկը կենդանւոյ մը վրայ ոխ ունենայ, կ'երթայ իր ընկերներէն շատերը հետը առած կուգայ ու կը յարձըկին կենդանւոյն վրայ . և սպաննելէն ետքը՝ ամէնքը մէկէն կը ցրուին՝ իրենց տեղը կ'երթան ։ Ձմեռ ատեն աւելի կը կատղին գայլերը քան թէ ամառը . վասն զի ձմեռը կենդանի չգտնելով որ որսան, շատը մէկտեղ կը սկսին գեղերու վրայ վազել . իրենցմէ մէկը կ'երթայ տներուն դռները կը ճանկռտէ, որ ներսինները մարդ կարծելով դուրս ելլեն, և ինքը կը պահուըտի . երբոր մէկը դուրս կ'ելլէ որ նայի թէ ինչ է, գայլերը յանկարծակի վրան կը յարձըկին, կը սպաննեն, ու մարմինը կտոր կտոր ըրած մէջերնին կը բաժնեն ։